

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Երիտասարդ փորձագետների վերապատրաստման ծրագիր

Հարավային Կալիֆորնիայի համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, համագործակցելով Լոս Անջելեսի քաղաքապետարանի և ՀՀ փոխվարչապետի գրասենյակի հետ, «Երիտասարդ փորձագետների վերապատրաստում» ծրագրին մասնակցելու համար հայտարարում է դիմումների ընդունելություն:

Ծրագրին կարող են մասնակցել միայն պետական ծառայողները:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լոս Անջելես և Երևան քույր քաղաքների համագործակցության շրջանակներում, USC – ի Հայկական հետազոտությունների ինստիտուտը կաշխատի ինստիտուտի խորհրդի անդամ Փոլ Քրեկորյանի և ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակների հետ՝ ընտրելու կրտսեր և միջին օղակներում աշխատող պետական ծառայողների, որոնք սովորելու և փորձի փոխանակման հնարավորություն կստանան Լոս Անջելեսի պետական հիմնարկներում: Այս գործընթացը կնպաստի երկու քաղաքների համագործակցությանն ու կյանքի դրական տեղաշարժին: Սա Հայաստանի պետական ծառայողների համար բացառիկ հնարավորություն է:

Մասնակիցները կտեղաբաշխվեն տարբեր գերատեսչություններում՝ կախված իրենց ներկայիս պաշտոնից և նախասիրություններից՝ դրանք ներառում են, մասնավորապես, տրանսպորտի, հասարակական աշխատանքների, տնտեսական զարգացման, կրթության, շինարարության և անվտանգության, ջրամատակարարման և էներգետիկայի, վերահսկման, ֆինանսների, սանմաքրման և ուրբանիզացիայի վարչությունները:

Տևողությունը Լոս Անջելեսում

Հունիսի 17-ից մինչև սեպտեմբերի 13-ը

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գտնվելով Լոս Անջելեսում, մասնակիցները բացի աշխատանքից, կօգտվեն նաև USC-ի Հայկական հետազոտությունների ինստիտուտի միջոցով իրենց հասանելի հարուստ

ռեսուրսներից՝ չսահմանափակվելով լեկցիաների հաճախումներով, կոնֆերանսներին ու քննարկումներին մասնակցելով, համապատասխան մասնագետների հետ հանդիպումներով և կրթաթոշակների հասանելիությամբ:

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է

- Նվազագույն կրթություն՝ բակալավրի աստիճան, անգլերենի իմացություն
- Ներկայումս աշխատում է Հայաստանի գործադիր իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմիններում
- Ինքնակենսագրականը պետք է ուղարկվի հետևյալ էլեկտրոնային փոստով՝ info_dpm@gov.am մինչև 2019 թվականի մայիսի 24-ը

Ընտրությունը կկատարվի 2019 թվականի մայիսի 29-ին:

Հայկական հետազոտությունների ինստիտուտը հոգալու է ընտրված դիմումատուների՝ Լոս Անջելեսում գտնվելու կեցության, ինչպես նաև ուղևորության և վիզայի ծախսերը: